«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ **Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում**

Դաստիարակ՝ Փիրուզա Աթոյան

Մանկապարտեզ՝ Տավուշի մարզի Բերդ համայնքի «Նորաշենի մանկապարտեզ ՀՈԱԿ»

2023թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այն ունի ներածական մաս, երկու գլուխ, պարապմունքի պլանավորում և եզրակացություն:

Առաջին գլխում անդրադարձել եմ ծեսերին, ինչ է իրենից ներկայացնում ծեսը, ինչպես ենք մենք այն իրականացնում, ինչ կարող ենք սովորել ծեսի միջոցով:

Երկրորդ գլխում ներկայացրել եմ ծեսերի դերը կրթական գործընթացում:

Գործնական աշխատանքը ցույց տվեց, որ նախադպրոցական երեխան ծիսական միջավայրում կիրառում է իր գիտելիքները, հմտություն է ձեռք բերում, զարգանում է երևակայությունը, կարողանում է ազատ արտահայտվել, կարողանում է կողմնորոշվել և կատարել համապատասխան գործողություններ՝ բանավոր խոսքի միջոցով հիմնավորելով և ներկայացնելով իր երևակայությամբ ստեղծած միտքը:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նախադպրոցականների դաստիարակության համակարգում կարևոր տեղ ունի գեղագիտական դասատիարակությունը ,որը նպաստում է երեխայի հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հմտացմանը :

Ազգային տոները, ծեսերն ու ծիսակարգերը մեծ հնարավորություն են տալիս երեխաների գեղագիտական դաստիարակության համար, տալով գիտելիք (ազգային երգ ու պար), ինչպես նաև գեղարվեստական հմտությունների ճաշակ (ծեսերին նախապատրաստվելիս ծիսական ատրիբուտների պատրաստում):

Հայոց ազգային տոները տարբեր ժամանակներում տարբեր դրսևորումներ են ունեցել: Սակայն այս տոների արմատներն այնքան խորն են եղել ժողովրդի ինքնագիտակցության մեջ, որ ժամանակի կրոնաքաղաքական փոփոխությունները նույնպես չեն կարողացել ազդել նրանց վրա: Հայկական մշակույթը հնուց ի վեր մինչև օրս էլ աչքի է ընկնում իր բազմաթիվ և յուրօրինակ ազգային տոներով : Մենք բոլորս այդ

տոները նշում ենք, որպես քրիստոնեական և եկեղեցական տոներ,սակայն այս տոների մեծ մասը գալիս է դեռևս նախաքրիստոնեական ժամանակներից: Շատ ազգային տոներ երկար ճանապարհ են անցել հեթանոսությունից մինչև քրիտոնեություն:

Երեխայի անձի ձևավորման և զարգացման մեջ էական նշանակություն ունեն ազգային տոները և ծեսերը :

Երեխայի անմիջական մասնակցությունը տոնախմբություններին, հաղորդակցումը միջավայրի, շրջապատի հետ, հասակակիցների և մեծահասակների հետ համատեղ գործողությունները նրա զարգացման ամենակարևոր գրավականներն են :

Հայտնի է,որ նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հետ աշխատանքի ամենաարդյունավետ ձևը խաղն է, քանի որ այդ տարիքում խաղը նրանց գործունեության հիմնական ձևն է: Խաղը նաև երեխայի խոսքի զարգացման ամենակարևոր միջոցն է:

Ծեսերը և ծիսական գործողությունները այս տարիքում երեխաների կողմից ընկալվում է որպես խաղ,դերախաղ:Բացի այդ, ազգային ծեսերն ու տոները երեխայի ընտանիքի և համայնքի կյանքի կարևոր ու պարբերաբար կրկնվող երևույթներն են: Երեխան դրանց առնչվում է նույնիսկ մինչև մանկապարտեզ գալը և անկախ դրանից:

Ծեսն այն միջավայրն է, որտեղ բոլորը ազգի մշակույթը յուրացրած ինքնադրսևորվելու, ստեղծագործելու ,որոնելու, հայտնելու, իմացածը կիրառելու լայն հնարավորություն ունեն:

Ծեսը, որպես միասնական, բազմաբնույթ ,ինտեգրված գործունեություն, նպաստում է նախակրթարան,

ընտանիք, համայնք արդյունավետ համագործակցությանը:

Ծեսի յուրացման, կրթության ըմբռնման հիմքը անհրաժեշտ է դնել դեռ վաղ տարիքից՝ այսինքն նախակրթարանից:

ԳԼՈՒԽ 1 ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐ ԵՎ ԾԵՍԵՐ

Տոների ձևավորումը և զարգացումը, որպես օրինաչափություն, պայմանավորված է սոցիալական, տնտեսական, պատմական, քաղաքական, էթնոմշակութային և կրոնական գործընթացների փոխազդեցություններով: Արտացոլելով հասարակության մեջ իրականացվող այդ գործընթացները, տոները կատարում են էթնիկ ավանդույթների պահպանման և դրանք սերունդներին փոխանցելու կարևորագույն գործառույթներ:

Տոները կատարում են նաև էթնիկ ավանդույթների կողմնորոշման, հասարակական հարաբերությունների կարգավորման և անհատի պահանջների բավարարման գործառույթներ: Այդ իսկ պատճառով տոնական համակարգի ձևավորման և փոփոխման գործընթացների ու մեխանիզմների, ինչպես նաև հասարակական ու ընտանեկան կյանքում դրանց գործառութային նշանակության բացահայտումը ոչ միայն տեսական, այլև կիրառական առումով կարևոր և հրատապ հիմնախնդիր է:

Առնչվելով տվյալ էթնոսի ծագման և զարգացման որոշակի հիմնախնդիրներին, տոնն արտացոլում է ոչ միայն էթնոմշակութային ինքնատիպությունը, այլև էթնիկ շփումների հետևանքով առաջացած փոխազդեցությունները: Հետևաբար՝ մշակութային այս տարրի ուսումնասիրությունը կարևորվում է նաև միջէթնիկ փոխհարաբերությունների տեսանկյունից:

Տոնն իրենից ներկայացնում է յուրատեսակ միկրոհամալիր, ուր առկա են կենցաղի և մշակույթի գրեթե բոլոր բաղադրիչները՝ բնակարան, ազգակցական, դրացիական, ընտանեկան հարաբերություններ, նախնիների հիշատակ ,ամուսնական ծիսաշար, երաժշտական ստեղծագործություններ, խաղեր, ուտեստ և տնտեսական գործունեության ավանդական փուլեր՝ դրանց հաջողություններն ապահովող ծեսերով ու սովորություններով: Նշված տարրերի այս ոչ ամբողջական ցանկը բավական է հիմնավորելու տոներում առկա կենցաղամշակութային բազում շերտերը; Բնականաբար, հարուստ է նաև մշակութային այս երևույթն ուսումնասիրող

գիտությունների տեսականին: Տոների և ծեսերի հետ առնչվող առանձին հիմնահարցեր են շոշափում ազգագրությունը, բանագիտությունը, կրոնագիտությունը, մշակութաբանությունը, սոցիոլոգիան, տոմարագիտությունը, գեղագիտությունը, հոգեբանությունը և գիտության այլ բնագավառներ:

1.1 ԱՄԱՆՈՐ

Հայերն այդ տոնը նշում են անհիշելի ժամանակներից սկսած: Ամանորն անվանել են նաև այլ անուններով Նավասարդ, Տարեմուտ, Տարեգլուխ, Կաղանդ, Լոլե, Նոր տարի:

Հազարամյակների ընթացքում տոնը նշելու ժամանակը փոփոխվել հետ ու առաջ է ընկել:

Խոր անցյալում հայոց նախնիները Ամանորը տոնել են գարնան զարթոնքին Արեգ ամսվա մարտի 21 – ի գիշերահավասարի օրը: Դա պատահական ընտրություն չէր, հայը նոր տարվա հաջողությունն ու բերքառատ լինելը կապել է գարնան զարթոնքի հետ: Տոմարական փոփոխությունների հետևանքով հայոց Նոր Տարին տեղափոխվել է Նավասարդի 1-ը, այսինքն օգոստոսի 11-ը:

Միայն 20-րդ դարի սկզբներից համընդհանուր դարձավ հունվարի 1-ը, որպես տարվա սկիզբ տոնելը;

Նոր տարին սկսում էր դեկտեմբերի 30-31-ին՝ ամանորյա խմորեղեն պատրաստելով; Խմորեղենի մեջ ամենագլխավորը «Տարի հաց» «Կրկենի» « Դովլաթ կրկենի» և այլ անուններով ծիսական հացն էր: Գլխավորը այն է, որ հացի մեջ որևէ նշան էր դրվում կորիզ կամ լոբի, կամ ուլունք, ավելի հաճախ՝ դրամ: ՈՒմ բաժին ընկներ նշանը, այդ տարի նա երջանիկ կլիներ կամ ընտանիքի հաջողությունը նրանից կգար: Նոր տարվա տոնական խնջույքը սկսվում էր դեկտեմբերի 31-ի ընթրիքով: Ընդհանրապես նոր տարվա սեղանին պարտադիր էին 7 տեսակ միրգ և 7 տեսակ ճաշատեսակներ: Տան բոլոր անդամների ներկայությունը պարտադիր էր: Տան մեծը բարձրացնում է բաժակը, օրհնում սեղանը, շնորհավորում տնեցիների Նոր տարին և առաջարկում

բոլորին ՝ առաջին բաժակի հետ մեղր համտեսել, որպեսզի ամբողջ տարին իրար հետ քաղցր զրուցեն:

1.2 ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Մեր եկեղեցին Սուրբ Ծնունդը (Աստվածահայտնությունը) նշում է հունվարի 6-ին: Այդ օրը մատուցվում է Սուրբ Պատարագ, և մարդիկ իրար ողջունում են՝ ասելով, «Քրիստոս Ծնավ և Հայտնեցավ, օրհնյալ է ծնունդը Քրիստոսի»: Համաձայն եկեղեցական ավանդության՝ Քրիստոսը Հովհաննես Մկրտչից Հորդանան գետում մկրտվեց այն օրը, երբ լրացավ նրա 30 տարին: Այդ պատճառով հայոց եկեղեցին Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոները կատարում է միևնույն օրը: Հունվարի 5-ի երեկոյան վառում են եկեղեցու բոլոր կանթեղները, մատուցվում է Սուրբ Պատարագ: Այն խորհրդանշում է աստվածային լույս, եկեղեցու օրհնություն: Հունվարի 6-ին Սուրբ Պատարագից հետո, կատարվում է նաև Ջրօրհնեքի արարողություն: Ջուրն օրհնվում է սուրբ խաչով, սուրբ Ավետարանով և Մյուռոնով: Հավաքվածները անմիջապես օրհնված ջրի մեջ թաթախում են իրենց ձեռքերը, քսում մարմնի հիվանդ մասերին՝ համոզված, որ օրհնված ջուրը կլավացնի իրենց:

1.3 ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿ

Ամբողջ քրիստոնյա աշխարհում Զատիկը համարվում է Քրիստոսի հարության տոն: Զատիկ անվանումն առաջացել է զատել բառից, որը նշանակում է զատվել և հեռանալ մեղքերից:

Այն համարվում է եկեղեցական տաղավար տոներից մեկը և այդ օրը ամբողջ քրիտոնյա աշխարհը տոնում է Քրիստոսի հարությունը, իբր հայտնելով ավետիսը «Քրիստոս հարյավ ի մեռելոց» և ի պատասխան ստանալով՝ «Օրհնյալ է հարությունը Քրիստոսի»:

Սակայն հայոց աշխարհի զատկի տոնի արմատները շատ ավելի հին են: Զատիկը հնում համարվում էր գարնանացանի տոնը և նվիրված էր Անահիտ դիցուհուն, ով էլ հովանավորում էր մայր հողի բեղմնավորումը:

Զատիկն այստեղ կրկին ծագում է զատել բառից, քանի որ հենց Անահիտն էր, որ միմյանցից զատում էր բնության գույները: Ըստ ավանդության, երբ ջրհեղեղից հետո Արացիները բնակություն հաստատեցին Արարատյան դաշտում, նրանք նկատեցին, որ ծիլ ծաղկունքն ամբողջությամբ գորշությամբ է պատված: Եվ արիների նահապետ Մանը զոհեր է մատուցում Անահիտ աստվածուհուն ,խնդրելով նրան որպեսզի վանի գորշությունն ու իրենց վերադարձնի բնության հազարավոր գույները: Սակայն Անահիտը պատասխանում է, որ բնության գույները կարող է վերադարձնել միայն Հազարան հավքը, ով դյութիչ ձայնով երգում է և գույնզգույն ձվեր ածում ,որով և նորոգվում է բնության գույները: Բայց այժմ հովքը պահվում է ստորգետնյա թագավորությունում, և Մանը պետք է ազատի և վերադարձնի նրան :

Մանը վերադառնում է Արարատ Հազարան հավքի հետ:Նա հավքին դնում է գետնին և հավքը սկսում է երգել՝ բազմաթիվ գույներ ճառագելով և գույնզգույն ձվեր ածելով:

Այնուհետև Անահիտը գալով Արարատ, հավաքում է գունզգույն ձվերը և շաղ է տալիս ողջ դաշտով մեկ: Այնուհետև պատվիրում է հավքին բույն դնել Արարատ լեռան վրա և մշտապես գույներ տարածել երկրի վրա:

Եվ այդ օրվանից Արիները սկսում են ուրախ վարել ու ցանել հողը , իսկ մանուկները, ջահել հարսներն ու աղջիկները մինչև ուշ երեկո երգում , պարում և ձվախաղ են խաղում :

Ի տարբերություն քրիստոնյաների, ովքեր զատկի ձվերը ներկում են մուգ կարմիր գույնով (Քրիստոսի թափած արյան գույնը), Արացիները զատիկի ձվերը ներկում էին բոլոր հնարավոր գույներով:Նրանց համար զատկի տոնի իմաստը, կյանքի վերածնունդը և բնության գարնանային զարթոնքը տանելու մեջ էր:

1.4 Մարիամ Աստվածածնի վերափոխման կամ Խաղողօրհնեքի տոն

Խաղողօրհնեքի տոնը հանդիսանում է Հայ Առաքելական եկեղեցու 5 տաղավար տոներից մեկը:

Ըստ ավանդույթի՝ Մարիամ Աստվածածինը Քրիստոսին խաչելուց հետո 12 տարի շարունակ այցելում է որդու գերեզմանին և աղոթում : Սակայն մի օր աղոթքներից մեկի ժամանակ նրան այցելում է Գաբրիել հրեշտակը և նրան հայտնում դեպի երկինք իր վերափոխվելու համար:

Հայաստանում, քրիտոնեության ընդունումից հետո, Մարիամ Աստվածածինն ընդունեց Անահիտին վերագրվող բոլոր հատկությունները:Իսկ Անահիտական տաճարները վերածվեցին Աստվածածին եկեղեցիների:Անահիտին նվիրված տոները վերագրվեցին Աստվածածնին ,քանի որ ժամանակին Անահիտի մեջ էին ամփոփված կնոջ և մայրության բոլոր առաքինությունները :

Իսկ խաղօրհնեքի ավանդույթները շատ ավելին էին քան քրիստոնությանը և կապվում էին Նավասարդի տոնակատարությունների հետ:Հնում Անահիտ ասվածուհուն է նվիրված եղել նաև խաղողօրհնեքը,որը նշվել է որպես բերքի տոն:Խաղողօրհնեքի առաջին պտուղը նվիրաբերել են Անահիտին :Հայոց դաշտերում և այգիներում փառաբանման ծես է կատարվել, որից հետո էլ սկսվել է բերքահավաքը:Տոնին մասնակցել են բոլորը,ինչն ուղեկցվել է տոնին հատուկ երգերով, պարերով և խաղերով:

Քրիստոնեության ընդունումից հետո Խաղողօրհնեքի տոնը միացվեց Մարիամ Աստվածածնի վերափոխման հետ :Սակայն այդ օրը եկեղեցում օրհնվում է միայն խաղողը, քանի որ այն համարվում է ազնվագույն մրգերից մեկը և, բացի այդ խաղողից էր պատրաստվում նաև պատարագի գինին:

1.5 Տիրոջն ընդառաջ կամ Տրնդեզ

Հայ առաքելական եկեղեցին ամեն տարի Քրիստոսի ծնունդից 40 օր հետո նշում է Տյառնընդառաջը: Տյառնընդառաջի տոնը համարվում է Տիրոջն ընդառաջ գնալու հրավեր բոլորի համար:

Հնում տրնդեզի կրակը նվիրված տոն է եղել: Ըստ հին հայկական պատկերացումների, տրնդեզի վառվող կրակի բոցերն ավելի էին ջերմացնում արևին և այսպիսով մեղմում էին ցուրտը և արագացնում գարնան գալուստը: Քանի, որ հայերն իրենց համարում էին Արևի հետևորդներ ,նրանք պաշտում էին նաև արևի երկրային տեսակը՝ կրակը:Տոնի ժամանակ կրակի վրայով թռչելով՝ մեր նախնիները հաղորդակցվել են բնության տարրերի հետ:Ըստ որոշ մեկնաբանությունների տրնդեզ բառը նշանակում է դիզված կրակ : Հեթանոսական շրջանում Տյանընդառաջի ծխի ուղղությամբ մարդիկ կատարել են գուշակություններ :Ծխի միջոցով մարդիկ գուշակել են տարվա բերքառատությունը : Տրնդեզի կրակը հիմնականում վառել են ցորեն հասկերից:Կրակի վառվելու ընթացքում կանայք սկուտեղի վրա բերում էին Տյառնընդառաջի տոնական կերակրատեսակները՝ փոխինձը, չամիչը, աղանձը,ընկույզը, բոված սիսեռը և պտտեցնում կրակի շուրջ ,իսկ դրա որոշ մասը շաղ տալիս կրակի վրա: Այնուհետև, երբ կրակի բոցն արդեն թուլանում էր , սկսում էին թռչել կրակի վրայով : Եթե կրակի վրայից թռչելիս փեշը անզգուշությամբ վառվում էր, դա համարվում էր հաջողության նշան :

1.6 Վարդավառ

Վարդավառը քրիստոնյա աշխարհում տարածված է, որպես Քրիստոսի պայծառակերպության օր, որը նշվում է Քրիստոսի հարությունից հետո 98-րդ օրը: Տոնի ժամանակ ժողովրդական սովորույթներից է միմյանց վրա ջուր ցողելն ու աղավնիներ բաց թողնելը, որոնք խորհրդանշում են ջրհեղեղը, Նոյի ընտանիքի փրկությունը և Նոյի աղավնուն :

Հեթանոսական շրջանում Վարդավառ տոնը նվիրված է եղել Աստղիկին: Աստղիկը հայոց դիցարանում համարվում էր սիրո և գեղեցկության աստվածուհին,ինչպես նաև ամպրոպի աստված Վահագնի սիրեցյալը:

Ըստ ավանդազրույցի՝ Աստղիկը ծնվել է ծովի փրփուրներից և որտեղ որ քայլում էր նրա ոտքերից կաթկթացող արյան հետքերի տեղում վարդեր էին բուսնում:

Աստղիկ աստվածուհին նաև երկնքից վարդեր շաղ տալով հայ աղջիկներին օժտում էր աստվածային գեղեցկությամբ: Վարդավառը հայոց աշխարհում ամենասիրելի տոներից մեկն էր և տոնվում էր մեծ շուքով: Այդ օրը բոլորը միմյանց վրա ջուր էին ցանում և իրար սեր ու գեղեցկություն տալիս : Տոնի ընթացքում նրանք փառաբանում էին Աստղիկին և միմյանց նվիրում տոնի խորհրդանիշը՝ վարդեր:

Ըստ արիական ավանդույթներից մեկի ստորգետնյա աստվածը առևանգում է Աստղիկին, որի հետևանքով արիների միջից վերանում են սերն ու գեղեցկությունը և նրանց հոգիներում բույն է դնում ատելությունը:

Բոլորը դառնում են տգեղ ու անգութ:Բայց Վահագնը, հաղթելով հրեշին ազատում է Աստղիկին վարդաջրով ,վարդավառ է սարքում և նրանց վերստին օժտում աստղիկյան սիրառատությամբ: Հնում մարդիկ Վարդավառը նշել են հիմնականում գետերի աղբյուրների կամ լճերի ափին, այնտեղ, որտեղ ջուրն առատ է եղել: Վարդավառը նաև համարվել էր ջրի և տարերքի պաշտամունքի տոն: Հայերի մեջ տարածված են ջրի և անձրևաբերության հետ կապված բազմաթիվ ծեսեր:Ջուրն ասոցացվել է նաև կապույտ գույնի հետ, որը և պարզություն, և մաքրություն է խորհրդանշում: Վարդավառը համարվում է նաև խնձորի տոնը: Ընդունված սովորություն կար,որ մինչև Վարդավառ խնձոր չեն ուտում: Եվ Վարդավառին՝ խնձորի բերքի օրհնությունից հետո, նոր կարելի էր բերքը հավաքել և օգտագործել:

Գլուխ 2 Ծեսը ուսումնական գործընթացում

2.1 Ծեսերի, ծիսական գործողությունների իրականացում

Երեխաների ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ավանդույթներ,ծեսեր, տոներ:

Եթե ընտանիքում, հասարակության մեջ չի պահպանվել ավանդականը, ապա այդ գործն իր վրա է վերցնում պետությունը կամ կրթօջախը՝ սկսելով մանկապարտեզից և շարունակելով մինչև դպրոցն ավարտելը:

Ծեսերին նոր կյանք տալու համար հարկավոր է նախ շատ լավ յուրացնել ավանդականը, ճանաչել այն միջավայրը, որտեղ ստեղծվել են դրանք: Իմանալ երգերն ու պարերը,ծիսական գործողությունները, պարագաները, դրանց խորհուրդներն ու պատրաստման տեխնոլոգիան :

2.2 Ինչ է ծեսը

Մշակույթը չի պահպանվի,եթե գոյություն չունենային սերնդեսերունդ նրա փոխանցման միջոցները:Պատմության ընթացքում կազմավորվել են մի քանի այդպիսի միջոցնե, ձևեր: Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծեսերը:

Ծեսը ներառում է վարքի այն ձևերը, որոնք իրենց էությամբ նշանային են, խորհրդանշական:Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Ծեսը հնուց ի վեր եկած բովանդակային գործողությունների շարք է, որը խորհրդանշական ձևերով վերարտադրում է ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության

միասնականությունը:Այն ավանդական կանոններին հետևելն է, որը նվիրվում է ընտելացման տվյալ կրոնին և արժեքների համակարգին, էթնոսին, պետությանը:

2.3 Ծեսով ուսուցման նպատակն ու խնդիրները

Ծեսերի, տոների ուսուցման նպատակը այն սովորողինը դարձնելն է, որ նա իրեն զգա մասնակից ու փոխանցող: Սովորողի համար ծեսը դառնում է իսկական ուսումնասիրության և հետազոտության աղբյուր:

Ծեսը միավորում է բոլորին:Նրանք ծեսերին նախապատրաստվելու համար և իրականացման ընթացքում կարողանում է իրեն լավագույն ձևով դրսևորել և ձեռք բերել հմտություններ ու կարողություններ:

Ազգային մշակույթի յուրացման փոխանցման ,տարածման ճանապարհին դասավանդողը իր առջև պետք է դնի կոնկրետ նպատակներ և խնդիրներ, որոնք պետք է բխեն կրթության շահերից ունենան երեխայի զարգացմանը նպաստող քայլեր:

Նպատակը՝ - Ազգային մշակույթի ժառանգում, յուրացում

Փոխանցում՝ որպես միասնական, բազմաբնույթ. ինտեգրված գործունեության միջոցով:

Խնդիրները՝

- ավանդական ծեսերի միջոցով ազգային ավանդույթների արժեքների յուրացում որպես բնական կենսակերպ
- ազգային արժեքների պահպանում, հայապահպան մտածողության ձևավորում
- ազգային մշակութային արժեքների պահպանման փոխանցման գործում
- սեփական մասնակցությունն ունենալու պահանջմունքի ձևավորում
- ստեղծագործելու, հետազոտելու. ինքնադրսևորվելու կարողություն:

2.4 Միջառարկայական կապերը ծեսի նախապատրաստական շրջանում և իրագործելիս

Երաժշտություն – գիտեն և կարողանում են կատարել ծիսական և այլ հայկական ժողովրդական երգեր:

Պար- գիտեն և կարողանում են կատարել ծիսական և այլ հայկական ավանդական պարեր:

Մայրենի - գիտեն ծեսը, ծիսական ավանդույթներ և զրույցներ,ասույթներ,առած-ասացվածքներ ,բանաստեղծություններ, կարողանում են հաղորդել ծիսական գործողություններ,ծանոթանում են տարբեր բարբառներին և տոների ու ծեսերի հետ առնչվող բանահյուսական նյութը,կարողանում են ներկայացնել բարբառներով:

Մարմնակրթություն – գիտեն և կարողանում են խաղալ ժողովրդական, մանկական ծիսական խաղեր ,պարել ազգային պարեր:

Ծանոթացում շրջապատին – կարողանում են հետազոտել ,գիտեն տարվա շրջափուլերի, բնության և մարդու վրա դրանց ազդեցության մասին, կարողանում են պատրաստել ծիսական, բուսական պարագաներ ուտեստներ (օրինակ զատկական ածիկ), գիտեն այն բույսերը որոնք օգտագործում են ծեսերին և ունեն դրանց մասին, այդ տարիքին համապատասխան գիտելիքներ:

Պարապմունքի պլանավորում
«Ազգային տոներ,ծեսեր» ենթատեքստից

Թեմա - Ծիսական ատրիբուտի պատրաստում (կենաց ծառ)

Պարապմունքի տեսակը - Զրույց

Նպատակը և խնդիրները

- Ծանոթացում ազգային, ծիսական տոներին
- Ազգային խաղերի իրականացում
- Համագործակցական կարողությունների զարգացում
- Երեխաների գեղագիտական ճաշակի զարգացում
- Ազգային մշակույթի խաղերի յուրացում

Կիրառվող մեթոդներ – խաղային, դիտում, խոսքային

Կարողունակություն - Լեզվական և հաղորդակցական

Վերջնարդյունք - Համագործակցել խմբային աշխատանքում

Խթանման փուլում ճշտել և ամրապնդել երեխաների գիտելիքները ծեսերի և ազգային տոների մասին:

Պարապմունքը սկսեցինք զրույցով կենաց ծառի մասին, որը հին ժողովուրդների, այդ թվում մեր՝ հայերիս հավատալիքային համակարգում մեծ տեղ է զբաղեցրել: Դրա մասին շատ են խոսել Նարեկացին, Ներսես Շնորհալին, Գրիգոր Տաթևացին և այլոք:

Աշնանը նախորոք խնամքով չորացրել էինք արքայանարինջի ճյուղեր և որոշեցինք ծիսական ատրիբուտը պատրաստել հենց այդ ճյուղերից: Խնձորը վերցրինք որպես ամուր հիմք, որին ամրացրինք ճյուղը: Հետո զարդարեցինք սպիտակ, կարմիր, կանաչ ժապավեններով, որոնք հայկական ավանդության մեջ միշտ են եղել կիրառելի և ունեցել իրենց խորհուրդը, սպիտակը՝ խաղաղության, կարմիրը՝ առատության և պտղաբերության, կանաչը՝ որպես

կյանքի խորհրդանիշ: Ընկույզներն էլ ապահովեցին գեղեցիկ տեսքը և հանդիսացան չարխափան: Այսինքն մի քանի ընկույզների թելերը կապում են իրար, որն էլ դառնում է չարխափան: Հայերը հավատում են, որ այդ շրխկոցը «վախեցնում և քշում է չարին»:

Ընկուզախաղ

Երեխաները խաղացին նաև ընկուզախաղ:

Խաղացողները մի մետր տրամագծով շրջան են կազմում և մեջտեղը ուղիղ գծով ընկույզներ շարում: Երեք, չորս մետր հեռավորությունից գցում են վեգերը (կամ մեծ ընկույզ): Եթե թեկուզ մեկն են շրջանից հանում, շահում են շարված բոլոր ընկույզները:

Երեխաները բարձր տրամադրությամբ և մեծ հավատով տեղավորեցին կենաց ծառը դահլիճում՝ սպասելով Ամանորյա տոներին:

Տնօրենի դիտարկման խոսք

Խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերց մեկն է: Այն ծագում է մանկության շրջանում և ուղեկցում մարդուն ողջ կյանքի ընթացքում՝ սկսած վաղ մանկության շրջանից, որտեղ երեխայի առաջատար գործունեության ձևը խաղն է: Ծիսական խաղերի, ծիսական գործունեությունների միջոցով սանը ծանոթանում է ազգային, մշակութային այն ոլորտի հետ, որտեղ միասին ներկայանում են խաղը, երգը, պարը, ծիսական գործողությունները:

Համարում եմ, որ դաստիարակը լուծել է իր առջև դրված խնդիրը և հասել նպատակին: Հստակ ձևակերպված էր հիմնական նպատակը և խնդիրները:

Տնօրեն՝ Ռիտա ՈՒզունյան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով հետազոտության արդյունքում եկանք այն եզրահանիգման ,որ ազգային տոների, ծեսերի կազմակերպումը կրթական գործընթացում.

1. Ազգային արժեքների պահպանումն է, հայապահպանության, մտածողության ձևավորում:
2. Սեփական մասնակցություն ունենալու պահանջմունքի ձևավորում է:
3. Ինքնադրսևորվելու կարողություն է:
4. Որ ծեսն այն միջավայրն է, որտեղ բոլորը ինքնադրսևորվելու, ստեղծագործելու, երևակայելու,իմացածը կիրառելու լայն հնարավորություն ունեն:

Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծեսերը: Ծեսերի իրականացումը կրթահամալիրում նպատակ ունի երեխաներին փոխանցել մշակութային ժառանգության արժեքները:

Ծեսն այն միջավայրն է, որտեղ մասնակիցները նախապատրաստական և իրականացման

ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: Երեխան իր մասնակցությամբ կարողություններ և հմտություններ է ձեռք բերում, զարգացնում է երևակայությունը, ազատ կարողանում է իր միտքը արտահայտել:

Ծիսական խաղերը և ծիսական գործողությունները նախադպրոցական տարիքի երեխաների ուսուցման և դաստիարակության յուրահատուկ մի միջոց են, որոնք նպաստում են անգամ

համակողմանի և ներդաշնակ զարգացմանը,ձևավորում էթնիկ մտածողություն և հարստացնում երեխայի աշխարհայացքը:

Օգտագործված գրականություն

1. Նախադպրոցական մանկավաժություն
2. Հ. Խառատյան - Առաքելյան «Հայ ժողովրդական տոները»
3. Վիքիպեդիայից՝ ազատ հանրագիտարանից
4. Տաթև Մելքոնյան «Ազգային խաղեր»
5. Հայկազ Մարգարյան «Հայկական ավանդական խաղեր»
6. Վ. Բդոյան «Հայ ժողովրդական խաղեր»
7. Ռ. Հարոյան «Զատիկ»
8. Ծեսը ինքնագիտակցության միջոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Оглавление

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....2
ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ....2
ԳԼՈՒԽ 1 ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐ ԵՎ ԾԵՍԵՐ....4
1.1 ԱՄԱՆՈՐ....5
1.2 ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ....6
1.3 ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿ....6
1.4 Մարիամ Աստվածածնի վերափոխման կամ Խաղօրհնեքի տոն....8
1.5 Տիրոջն ընդառաջ կամ Տրնդեզ....9
1.6 Վարդավառ....9
Գլուխ 2 Ծեսը ուսումնական գործընթացում....11
2.1 Ծեսերի, ծիսական գործողությունների իրականացում....11
2.4 Միջառարկայական կապերը ծեսի նախապատրաստական շրջանում և իրագործելիս....13
Պարապմունքի պլանավորում «Ազգային տոներ,ծեսեր» ենթատեքստից....14
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ....16
Օգտագործված գրականություն....17